ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թ.-ի մայիսի 23-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 1 <<Բ>> դասարանի ծնողական ժողովը 31 ծնողների մասնակցությամբ: Ծնողական ժողովին մասնակցում էին դասվար Ար. Սարգսյանը և տնօրենի կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Երկրորդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփում:

2. Ընթացիկ հարցեր:

3. Էքսկուրսիայի կազմակերպում:

Լսեցին

1. Երկրորդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփում:

Ելույթ ունեցավ դասղեկ Ար. Սարգսյանը, ով ամփոփեց երկրորդ կիսամյակի և տարեկան արդյունքները: Դասվարը նշեց, որ 1<<Բ>> դասարանում բոլոր աշակերտները տառաճանաչ, թվաճանաչ են, կարողանում են ընթերցել տեքստը,կատարել մաթեմատիկական առաջադրանքներ: Ծնողներին անհատական ներկայացվեց իրենց երեխաների բացթողումներն ու թերացումները, դասարանում կան աշակերտներ, որոնք սահուն չեն ընթերցում տեքստը, դժվարանում են թելադրություններ գրելիս:

Որոշեցին

Ավելի հետևողական լինել բարձր առաջադիմություն ապահովելու համար: Ամառային արձակուրդների ժամանակ երեխաների հետ ծնողները կրկնեն անցած նյութը, այն չմոռանալու համար: Այն ծնողները, որոնց երեխաները ունենան որոշակի թերացումներ, որոշեցին ամառային արձակուրդների ընթացքում ավելի շատ աշխատել երեխաների հետ, որպեսզի վերացնեն բացթողումները:

Լսեցին

2. *Ընթացիկ հարցեր:*

Ժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք այլ հարցեր, որոնք վերաբերվում էին կարգապահությանը, մաքրությանը, սանիտարական վիճակին և ամառային արձակուրդների ընթացքում կատարվելիք տնային հանձնարարություններին:

Որոշեցին

Որոշեցին բոլոր հարցերում համագործակցել դասղեկի հետ և օգնել նրան:

Լսեցին

3. Էքսկուրսիայի կազմակերպում:

Ծնողներն առաջարկեցին և որոշվեց գնալ էքսկուրսիա դեպի Օշական, որտեղ

հանգչում է Մաշտոցի աճյունը և Տառերի պուրակ:Կազմակերպչական հարցերի շուրջ ելույթ ունեցան մի քանի ծնողներ: Նրանք առաջարկեցին ուղևորությունը կազմակերպել անվտանգ, ապահով տրանսպորտի միջոցով, ինչպես նաև երեխաներին ապահովել սննդով:

Որոշեցին

Էքսկուրսիայի հետ կապված կազմակերպչական բոլոր հարցերը հանձնարարել ծնողկոմիտեի նախագահին և անդամներին, հավաքագրել 3000-ական դրամ, երեխաների տեղափոխության հարցը պատշաճ ձևով կազմակերպելու և էքսկուրսիայի ընթացքում սնունդը ապահովելու համար: Լինել հետևողական հատկապես տրանսպորտի ապահովության հարցում:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հայրապետյան Ռուզաննա /

Քարտուղար՝ Անդրեասյան Ժաննա /